և առատ ոսկի և արծաթ տալով Խանին և միւս մեծամեծներուն, հազիւ կրնայ զանգակատան շինութեան հրաման ստանալ։ Եւ 1657ի Յուլիս ամսոյն կը սկսի շինել «զարմանալի արուեստիւ, յոգնազան նկարակերտութեամբ քանդակեալ ի վէմն յամենայն պատշաճաւոր տեղիս տեսակս զանազան կենդանեաց, գազանաց, անասնոց, թռչնոց, բուսոց, և տնկոց· այլ և յօրինուած շինուածոցն յոյժ գեղեցկայարմար, խարիսխքն և սիւնքն և խոյակքն և կամարքն և այլքն ամենայն· և յաւուր օրհնութեան նորա անուանեցին Ս· Հրեշտակապետ, խորհրդով Գաբրիէլեան փողոյն, որ ի բարձանց գոչէ» (15)։ Զանգակատան շինութիւնը կ'աւարտի 1658ին։ Կաթողիկոսը Խաչվերացի տօնին կ'օրհնէ զանգակատան վրայի խաչը (16)։

Յակոբ Ջուղայեցի կը նորոգէ նաև բազմաթիւ վանքեր և կառուցանել կու տայ եկեղեցիներ՝ Թիֆլիս, Լոռի, Այրարատ, Սիւնիք, Ղափան, Նախիջեվան, Աստապատ, Ջահուկ, Շահկերտ, Գուզ ևն. (17)։

Ջամբռի հեղինակը, Սիմոն Կաթողիկոս, կը նկարագրէ՝ թէ ինչպէս Յակոբ

---

(15) Առաքել Դաւրիժեցի, Անդ, էջ 262-263։

(16) Անդ։

(17) Անդ, 272։